



ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒԽ

Ս. պատարագ և հոգեհանգիստ.—Մեծ տևմբերի 27-ին, կիրակի: Ազգին Վեհափառ Հայրապետի փետրվար 13 թվակիր կոնդակի հրամանից համաձայն Մայր Աթոռում և հանդիսավորությամբ նշվեց երջանկահիշատակ Տ. Տ. Ներսես Ե Աշտարակեցու ծննդյան 200-ամյակը:

Առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարում մատուցվում է ս. պատարագ: Պատարագում է ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրապ Վրդ. Փանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ տ. Գևորգ Վրդ. Անդրադարյանը ընթերցում է Վեհափառ Հայրապետի՝ Ներսես Աշտարակեցու ծննդյան 200-ամյակի առթիվ գրած 1970 թ. փետրվար 13 թվակիր կոնդակը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եւելիցական թափորով առաջնորդվում է Մայր տաճարի զանգականուն հարավ-արևմտյան կողմում գտնվող Աշտարակեցու շիրիմը և համագահում հոգեհանգստյան արարողությանը:

Ս. պատարագին, ինչպես նաև հոգեհանգստյան արարողությանը, ներկա էին բազում ոխտավորներ Ա.Ա. Օհնիկյանը, Ֆրանսիայից, Լիքանանից և այլ վայրերից ժամանած հաւատացյալների նոնց բազմություն:

Հորեցյանական հանդիսություն Վեհարանում.—Նոյն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց դաჩիճում տե-

ղի է ունենում հորեցյանական հանդիսություն՝ Վեհափառ Հայրապետի բարձր հայագահությամբ՝ նվիրված Ներսես Ե Աշտարակեցու կանքին ու գործունեությամբ:

Հանդիսությանը ներկա էին շորջ 300 հրավիրյաններ, այդ թվում՝ Գերագույն հոգևոր կողմերի անդամները և Մայր Աթոռի միաբանությունը, նոգեսոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնությունը, Թիֆլիսի Ներսիսան դպրոցի շրջանավարտների միության ներկայացուցիչներ, մատակրականներ:

Հանդիսությանը ներկա էին նաև ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կիլիկիան Աթոռի միաբաններ տ. Ղևոնի արքեպ. Զեպէյանը տ. Տաճառ արքեպ. Ուրֆայանը և տ. Տիրապ Վրդ. Փանոսյանը:

Հանդիսությունը բացվում է ՀԱՍՀ պետական հիմնի նվազով: Ասպա կատարվում է «Ուրբագրադեցիս» շարականը:

Հոգևոր ճեմարանի տեսքը տ. Շնորհը Վրդ. Փանոսյանը հանդես է գալիս հանդիսության բացման խոպով՝ նշելով բազմավաստակ Հայոց Հայրապետի կանքի և գործունեության ուսանելի հանգրվանները:

Օրվա գլուխով բանախուս էր «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախուս Ա. Հանդիսությունը, որը հանդես է գալիս Աշտարակեցու կանքին և գործունեությանը նվիրված բովանդակալից

և ոգևորիչ զեկուցումով, որը տպագրվել է «Հշմիածին» ամսագրի սովոր համարում (էջ 22):

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ և Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, արվեստաբան Ս. Մելիքսեթյանը ողջունի խոր է ասում՝ վեր հանելով Ներսիսյան դպրոցի կատարած լուսավորական դերն ու նշանակությունը ընդհանրապես հայ մշակույթի և ի մասնավորի հայ մանկավարժական, գիտական մտքի զարգացման, ինչպես նաև արվեստի և այլ բնագավառներում:

Հյուրաքար Մարտ Աթոռում գտնվող Հ. Շ. Սիրունին, հանուն սփյուռքի հայ մտավորականության, ողջունի խոր է ասում:

Հանդիսության առաջին մասն ավարտվում է: «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի նվագով:

Տասը բուռե ընդմիջումից հետո ևսում է հանդիսության գեղարվեստական մասը:

Սուածինը հանդեռ է զայի 12-ամբա երգահան-դաշնակահար Արտեմ Ղազարյանը, որը դաշնամուրի վրա կատարում է Ականլատիի «Մի մինոր» սոնատը և իր «Գիշեր և հափշտակում» ու «Ակերցո» ստեղծագործությունները:

Հանրապետության վաստակավոր արտիստութիւն Բելա Դարբինյանը նույնութով կատարում է՝ «Երևանի գիշերները» (Ա. Դոլիսիանյան), «Մայր» (Նովիկով), «Ամարիլիս» (Գաշինի), «Յար, առանց քեզ» (Գուսան Սշու) երգերը:

Համերգի վերջում հանդեռ է զայի Հայկական պետական ֆիլմարտունիայի լարային քայլակը՝ նետկալ կազմով. Լևոն Մամիկոնյան (առաջին ջութակ), Մարտին Երիցյան (երկրորդ ջութակ), Յորի Մանուկյան (ալտ) և Ֆեղիք Սիմոնյան (թավշութակ):

Քայլակը մեծ վարպետությամբ կատարում է. «Հունգարական պար» (Բրամի), «Հնդկական հյուրի երգը» (Միմսկի-Կորսակով), Չորրորդ մաս «Ոնե բեմոյ մասնոր» և «Երածշտական ակներարթ» (Ծուրերտ), Առաջին մասը «Առաջին կվարտետ» (Ա. Ալվազյան), «Գարուն ա», «Կոռունկ», «Կաքավիկ» և «Վաղարշապատի պար» (Կոմիտաս) հանճարեղ ստեղծագործությունները:

Երշանկաթիշատակ Տ. Տ. Ներսես և Աշտարակեցոյ հիշատակին նվիրված սովոր հանդիսությունը վերջանում է երեկոյան ժամը 10-ին, խանդավառ մթնոլորտում:

